



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4208




# ՁԵՌՆԱՐԿ

## ԵՒՐՈՊԱԿԱՆ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ

(ԳՃԱՅԻՆ ՍԻՍՏԵՄ)

ՅԱՐՄԱՐԵՅՐԱՅ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կազմեց՝ ՅԵՂԵՆ-ՍԻՄՈՆ



ԹԻՖԼԻՍ

Տպարան «Երասլուծիչ» Մոսկովսկոյեա փող. № 5

1907

78

- 16



21 OCT 2010

78  
Σ-16



# ԶԵՌՆԱՐԿ

## ԵՒՐՈՊԱԿԱՆ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ

(ԳԾԱՅԻՆ ՍԻՍՏԵՄ)

ՅԱՐՄԱՐՆԵՐԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կազմեց՝ ՅԱԿԱՆ-ՍԻՄՈՆ



ԹԻՖԼԻՍ

Տպարան «Եղբայրություն» Մոսկովսկայա փող. № 5

7001



12 JUL 2013

9208

# Մ Ի Բ Ա Ն Ի Խ Օ Ս Բ

Հայերենի մեջ շունեկաշոյ տրոպական ձայնագրութիւնն ուսումնարեղաւ ձեռնարկ, սոյն զրֆոյկը գալիս է այդ պակասը շրացնելու.

Իրֆոյկիս մեջ պահպանելով թէ հայկական էր թէ տրոպական ձայնագրութեան սերմիկները, դրուած են նաեւ պակասերուն օրինակներ, որոնք զի հնար եղածին չափ հասկանալի ու մասշտի կացուցանուի մ' ամեն մի սովորողի համար:

Հայոց ուսումնարանների համար՝ իբրեւ տարրական ձայնագրութեան դասագիրք՝ երկու տարուայ դասընթաց (կուրս) է: ԱՌԱՋԻՆՆ ԾԱՍԸ ԿԱՌԱՐԱՅԻՆՆԵՐԻ ՄԻ ԲԱՆԻ ԲԱՐԴ ԵՂԱՆՆԵՐԻ՝ ՎԵՏՖ Ե ՍՈՎՈՐԵՂՆԵՂ ԱՌԱՆՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ (IV-րդ բաժանմունք), իսկ ԵՐԿՐՈՐԴ ԾԱՍԸ՝ երկրորդ դասարանում (V-րդ բաժանմունք):

Սրանով նախապատրաստելուց յետոյ, աւելի բարձր դասարաններում արդէն կարելի կըլի մեկնել՝ հարմոնիան (ներդաշնակութեան եմֆները), որի մասին գրելը զրֆոյկիս ծառայից ու նպատակից դուրս է:

Ձայնագրութեան ուսուցիչներն ուսուցանելու բացատրութիւնը պէտք է փնտրեն «Ուղեցոյց տարրական ձայնագրութեան» զրֆոյկի ընդ որոք թեպէտք թուանշանական սխեմով է գրուած, սայն նրանք նոյն ադր բացատրութիւնները կարող են սալ աշակերտին նաեւ տրոպական նօսներն ուսուցանելիս:

Եթէ յաջողութիւն աչդ, գոհ կըլնայ

ԿԱԶՄՈՂԸ:



11697-57



# Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ս

2 Ա Յ Ն

Առհասարակ ինչ որ ականջով լսում ենք՝ ձայն ենք անուանում:

Ձայնը առաջ է գալիս երկու առարկայի հարուածից: <sup>1)</sup>

Ձայները երկու տեսակ են լինում. անորոշ կամ ոչ-երաժշտական և որոշեալ կամ երաժշտական:

Ոչ-երաժշտական ձայներ են՝ խօսակցութիւնը, ունոցը, գորգոռոցը, ազմուկը, լծը/սթը/սկոցը, սը/սը/սըցը և այլն և այլն:

Երաժշտական ձայներ են՝ երգեցողութիւնը, նուազը, զանգակի, սո-խակի ձայները, մի խօսքով այն բոլոր ձայները, որոնք մեզ վրայ ախորժ տպաւորութիւն են թողնում:

Եւրոպացիք երաժշտութեան ասում են մուզիքա: <sup>2)</sup>

Մուզիքական ձայները զանազան աստիճանի բարձրութիւն ունին և գրում են յատուկ ձայնազրհերով:

Ձայնազրհերին կամ ձայնանիշներին եւրոպացիք ասում են նօտա:

Ինչպէս որ տառերով կարգում ենք, թուանշաններով հաշւում ենք, այնպէս էլ նօտաներով երգում ու նուագում ենք:

Նօտաներով երգելու և գրելու արուեստը կոչւում է ձայնագրութիւն: Պան՝ հայկական ձայնագրութիւն, թուանշանական ձայնագրութիւն, եւրոպական ձայնագրութիւն կամ գծային սիստեմ և այլն:

Եւրոպական ձայնագրութիւնը ամենատարածուածն ու ամենամշակուածն է:

<sup>1)</sup> Բնագիտական փորձերը ցոյց են տուել, որ ձայնը միայն այն ատեն կը լսուի, երբ ձայնահան մարմինը (լարի, օդի խողովակային տատանում դէպի մի կողմ, մի վայրկեանում որոշ քանակութեամբ տատանումն է ապիս (Вибрация): Օրինակ, մենք կարող ենք ձայն լսել, երբ մի վայրկեանում 16—73,700 անգամ օդը տատանուի: Այս շափից առաւել կամ նուազ տատանումները այլևս իսկական ձայն չեն տալիս: Առաջին մուզիքական ձայնը՝ դօ-ն տալիս է մի վայրկեանում 420 տատանում:

<sup>2)</sup> Մուզիք խօսքը յունարէն մուզա, մուշա խօսքիցն է: Մուտանիքը հնումը աստուածուհիներ էին և զեղարուեստի ներկայացուցիչ, որոնց գլուխն էր Ապոլլոնը:



ԵՆՐՈՊԱԿԱՆ ՉԱՅՆԱԳՐՈՒԹԻՒՆ  
(Գծային սիստեմ)

Նօտաներն իրենց բարձրութեան աստիճանի համեմատ գրուում են հինգ  
դուզահեռական գծերի վրայ, որոնք կոչւում են ձայնախազեր:

Ձայնախազերը պէտք է հաշուել անպատճառ ներքևից վերև:

Ամենագլխաւորը այս ձայնախազերն են, իսկ ձայնանիշները կա՛ն նօ-  
տաները պատկերացնում են կոլոր սև կէտեր և օղակներ՝ օ օ շ շ, ո-  
րոնք գրւում են հէնց այդ հինգ գծերի վրայ և նրանց միջանցքներում:

Որքան ձայնը բարձր ու սուր լինի, նօտաներն այնքան բարձր են գրւ-  
ւում, իսկ որքան ձայնը ցած ու հաստ լինի, այնքան ցածր են գրւում:

Սակայն երգեցողութիւնը և մանաւանդ երաժշտական գործիքների  
նուագը այդքան ձայնաստիճաններով (5+4=9) չեն բաւականանում, այլ  
գրանցից էլ աւելի են բարձրանում ու ցածրանում, այդ պատճառով հինգ  
գլխաւոր գծերի վերևից ու ներքևից՝ հարկաւոր գէպրերում, աւելացնում են  
երկրորդական՝ օժանդակ փոքրիկ գծեր:

Ուրեմն, նօտաները գրւում են նաև հինգերորդ գծից վերև, առաջին օ-  
ժանդակ գծի վրայ, առաջին օժանդակ գծից վերև, երկրորդ օժանդակ գծի  
վրայ, երկրորդ օժանդակ գծից վերև և այլն: Ներքևում գրւում են՝ առաջի,  
գծի տակը, առաջին օժանդակ գծի վրայ, առաջին օժանդակ գծի տակը,  
երկրորդ օժանդակ գծի վրայ և այլն: Այսպէս.

Ձայնագրութեան այս տեսակին ասում են գծային սիստեմ կամ եւրօ-  
պական ձայնագրութիւն:

Բ Ա Ն Ա Լ Ի Ն Ե Ր

Մուգիրայի մէջ հիմնական ձայները հօթն են՝ ոօ, ոէ, մի, ֆա, սօլ՝  
լեա, սի, մնացածները նայն այս նօտաների անուններն են կրում և նոյն  
նօտաների բարձր կամ ցածր կրկնութիւններն են:

Իւրարանչիւր նօտա ունի իւր յատուկ երաժշտական ձայնը՝ տոնը:

Գծային սիստեմի նօտաները բացայայտելու համար՝ ձայնախազերի սկզբ-  
բին գրւում է անպատճառ մի ըանալի:

Բանալիները մի բանի տեսակ են, որոնցից ամենագործածականը երկուսն  
է. ջութակի կամ սօլ՝ ըանալի և ըասսի կամ ֆա ըանալի:

Երբ գրուի ջութակի բանալին՝ երկրորդ գծի վրայ (ցածրից հաշուած)  
պէտք է ընդունել սօլ՝ նօտան, իսկ բասսի բանալիով շորորդ գծի վրայ ընկնում  
է ֆա նօտան: Մնացեալ նօտաները այդ կենտրոններից հաշուելով պէտք է  
գտնել:

Եօթն հիմնական նօտաների վրայ աւելացնելով ութերորդը, որ առա-  
ջինի կրկնութիւնն է, ստացւում է մի ութնեակ, մի օկտաւ:



Հիմնական նոտաներ

Իտալերէն do re mi fa sol la si do  
Գերման. C D E F G A H C  
Հայերէն փօ է վէ բէ խօ նէ պա փօ

ուժնեակ ցած

do re mi fa sol la si do  
C D E F G A H C  
փօ է վէ բէ խօ նէ պա փօ

Այստեղ բասսի բանալիով գրուած նոտաները մի ուժնեակ ցածր են ջութակի բանալիով գրուածներէն: Եթէ բասսի բանալիով գրուածները գրելու լինին ջութակի բանալիով, այն ժամանակ ստիպուած պէտք է լինենր ստորին օժանդակ գծերի օգնութեան դիմելու. այնպէս էլ՝ եթէ ջութակի բանալիով գրուածները գրելու լինին բասսի բանալիով, այն ժամանակ ստիպուած պէտք է լինենր վերին օժանդակ գծերի օգնութեան դիմելու:

Օժանդակ գծերի անյարմարութիւնից ազատուելու համար է, որ մէկի փոխարէն մի քանի բանալիներ են գործ ածուում:

Բասսի բանալին երբեմն գործ է ածուում ըարիտոնի և խոր-բասսի (կոնտր-բասս) համար: Բանալին և Ֆա նոտան ձայնախաղի վրայ իրենց տեղը փոխում են: Բարիտոնի զէպըում գրուում են երբորդ գծի վրայ, իսկ խոր-բասսի զէպըում՝ հինգերորդ գծի վրայ.

Բարիտոնի համար

Ֆա

Կոնտր-բասսի համար

Ֆա

Բացի սոլ' և Ֆա բանալիներից կայ նաև դօ բանալի, որ գրուում է ձևով և որը ինչ ձայնախաղի վրայ գրուի, այնտեղից պէտք է հաշուել դօ և միւս նոտաները: Գործ են ածուում երգեցիկ խմբի զանազան ձայների համար:

դօ      դօ      դօ      դօ

- |  |               |
|--|---------------|
| Առաջին գծի վրայ գրուած դօ բանալին ծառայում է սօպրանի համար |               |
| Երկրորդ գծի  | մեցցօ-սօպրանի |
| Երրորդ գծի   | այլտի համար   |
| Չորրորդ գծի  | տենորի համար: |

### Ձայնաստիճանները բաժանուում են մի քանի ուժնեակների կամ օկտաւների.

Մեծ օկտաւ

Փոքր օկտաւ

Նաաջին օկտաւ (հիմնական նոտաներ)

Երկրորդ օկտաւ

### ՆՕՏԱՆԵՐԻ ՏԵՒՈՂՈՒԹԻՒՆԸ

Ձայնախաղերը ցոյց են տալիս միայն նոտաների ձայնաստիճանները, այսինքն նրանց բարձրութիւնը կամ ցածրութիւնը, բայց որպէս զի իմացուի, թէ մի որևէ նոտա որքան երկար կամ կարճ ժամանակ պէտք է երգել, — գրա համար անհրաժեշտ է իմանալ նոտաների տևողութեան չափը:

Օղակաձև նոտան (շ) ընդունելով ժամանակի տևողութեան մի ամբողջութիւն, բաժանում են նրան զանազան մասերի:

Երկու մասի բաժանելով, կստացուի կէս նոտա, որ գրուում է ձևով կամ , կէս-նոտան էլ երկուսի բաժանած, կստացուի քառորդ նոտա, գրուում է կամ : Քառորդի կէսն է՝ ութերորդ նոտա — կամ : Ութերորդի կէսը՝ տասնութերորդ կամ և այլն:

Հետեեալ աղիւսակը ցոյց է տալիս նոտաների տևողութեան այդ հաշուելիչուը:

Նմրող նոտան իր մէջ պարունակում է՝



2 կէս նոտա

կամ 4 քառորդ նոտա

կամ 8 ութերորդ նոտա

կամ 16 տասնութերորդ նոտա



Կան նաև 32 թղ նոտա , 64 թղ նոտա , որոնք աւելի քիչ են գործածուած, այն էլ գրեթէ միայն նուագածութեան մէջ:

Ահա այսպէս իւրաքանչիւր նոտա, ըստ իւր ձևի, առաւել կամ նուազ տևողութեամբ է երկուած:

Չստ անգամ հարկ է լինում երկեցողութեան մի որևէ մասում փոքր ինչ կանգ առնել հանգստանալ: Այս դէպքում նոտաներին փոխարինում են հանգստութեան նշանները կամ ռաղարմները, որոնք մուղիքայի մէջ կոչուած են պաուզա:

Պաուզաներն էլ ըստ տևողութեան բաժանուած են այնպէս, ինչպէս և նոտաները, այսինքն ամբողջ պաուզան ունի ամբողջ նոտայի տևողութիւն, կէս-պաուզան՝ կէս նոտայի տևողութիւն և այլն:

Գրում են այսպէս.

Ամբողջ պաուզա	$\frac{1}{2}$ պաուզա	$\frac{1}{4}$ պաուզա	$\frac{1}{8}$ պաուզա	$\frac{1}{16}$ պաուզա	$\frac{1}{32}$ պաուզա
					
Ամբողջ նոտա	$\frac{1}{2}$ նոտա	$\frac{1}{4}$ նոտա	$\frac{1}{8}$ նոտա	$\frac{1}{16}$ նոտա	$\frac{1}{32}$ նոտա
					

Եթէ որևէ նոտայի կամ պաուզայի մօտ կէտ գրուած լինի, այն ժամանակ նրա տևողութիւնն աւելանում է իւր արժողութեան կէսի չափ:







Օրինակ.

Գրում է


					
Հասկացում է			կամ թէ		

Երբեմն, թէև հազուադէպ, նոտաների կամ պաուզաների մօտ պատահում են կրկնակի կէտեր: Այդ դէպքում երկրորդ կէտի տևողութիւնը հաւասար է առաջին կէտի տևողութեան կէսին, որով նոտայի արժէքը դարձնալ իւր բառորդի չափ աւելանում է:


Գրում է

					
Հասկացում է			կամ թէ		և այլն

Եթէ պաուզան աւելի երկար ենք ուզում պահել՝ քան թէ ամբողջն է, պէտք

է գրենք  և այլն՝ առաջինը 2 տակտ, միւսը 4 տակտ պէտք


է լուել: Իսկ դրանցից էլ աւելին գրուած է երկար սև գիծ և գլխին թուանշան՝ տակ-

տերի քանակութեամբ  և այլն:

ՏԱԿՏ ԵՆ ԲԱՂՄՈՒՄ


Մուղիքայի մէջ որևէ երգ կանոնաւոր երգելու կամ նուագելու համար՝ ուղղահայեաց զոյգ գծերով երգը բաժանում են հաւասարաչափ մասերի, որոնք կոչուած են պարբերութիւններ (նախադասութիւններ), որանք էլ իրենց հերթին բաժանուած են առանձին ուղղահայեաց գծերով աւելի մանր մասերի՝ տակտերի:

Առաջին պարբերութիւն



տակտ տակտ տակտ տակտ տակտ տակտ տակտ տակտ

Երկրորդ պարբերութիւն



տակտ տակտ տակտ տակտ տակտ տակտ տակտ տակտ

Տակտերի մէջ եղած նոտաները բաժանուած են ըաղխումների: Չեորի կամ ոտրի մի շարժումը կամ մի հարուածը կոչուած է ըաղխում: Տակտերն իրենց մէջ պէտք է պարունակեն հաւասարաչափ բաղխումներ:

Իւրաքանչիւր երգի կամ պիէսի սկզբին՝ բանալիից յետոյ գրուած է տակտի չափը՝ կոտորակի ձևով  $\frac{1}{4}$ ,  $\frac{2}{4}$ ,  $\frac{3}{4}$  կամ  $\frac{3}{8}$ ,  $\frac{6}{8}$  և այլն: Կոտորակի վերին թիւը (համարիչ) ցոյց է տալիս, թէ մի տակտի մէջ քանի բաղխում կայ, իսկ ցածրի թիւը (յայտարար) ցոյց է տալիս, թէ ինչ մեծութեան (տևողութեան) նոտան է ընդունուած մի բաղխում:

Երբ տակտի չափը ցոյց տուող կոտորակի յայտարարը 4 է, պէտք է բառորդ նոտան ( $\bullet$ ) ընդունել տակտի մի մասը, մի բաղխումը, իսկ երբ կոտորակի յայտարարը 8 է, այն ժամանակ տակտի մի մասը, մի բաղխումը պէտք է հաշուել ութերորդ ( $\bullet$ ) նոտան:







Իսկ հետեւալ աստիճանների հետ հետզհետէ կազմում են՝ սեկունդա (երկրորդ), տերցիա (երրորդ), կվարտա (չորրորդ), կվինտա (հինգերորդ), սեկստա (վեցերորդ), սեպտիմա (եօթերորդ), օկտաւա (ութերորդ) և այլն:

Պրիմա, սեկունդա, տերցիա, կվարտա, կվինտա, սեկստա, սեպտիմա, օկտաւա. և այլն  
դօ-դօ դօ-ռէ դօ-մի դօ-ֆա դօ-սօլ դօ-լեա դօ-սի դօ-դօ

Սեկունդա տերցիա կվարտա կվինտա սեկստա սեպտիմա օկտաւա և այլն  
դօ-սի դօ-լեա դօ-սօլ դօ-ֆա դօ-մի դօ-ռէ դօ-դօ

Այս օրինակներում ինտերվալները հաշուած են դօ ից, բայց կարելի է հաշուել նաև ամեն մի ուղածղ նօտայից:

Լինում են երբեմն աւելի մեծ ինտերվալներ, որոնք քիչ են գործածւում: Օրինակ՝ առաջի դօ-ից մինչև երկրորդ ռէ կազմում են նօնա (իններորդ), դօ-ից մինչև երկրորդ մի՝ կոչւում է դեցիմա (տասերորդ), դօ-ից մինչև երկրորդ ֆա - ունդեցիմա (տասնոււթերորդ) և այլն:

նօնա դեցիմա ունդեցիմա նօնա դեցիմա ունդեցիմա  
դօ-Ռէ դօ-Մի դօ-Փա դօ-սի դօ-լեա դօ-սօլ

ՆՕՏԱՆՆԵՐԻ ԽՐՈՄԱՏԻԲԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Երկու նօտաների ամենամօտ ինտերվալը կոչւում է կիսաձայն: Ամբողջ ձայնը կամ տոնը կազմուած է երկու կիսաձայներից: Խրոմատիքական կամ կիսաձայնական նշաններն են՝ դիեզ (կիսվեր), բեմօլ՝ (կիսվար) և բեկառ (ձայնազարձ, OTKAZЪ): Դիեզը գրւում է նշանովս #, որ գրուելով օրիէ նօտայի սկիզբը, կէս-տոն բարձրացնում է:

do-dièse re dièse mi-dièse fa-dièse sol-dièse la-dièse si-dièse  
Cis Dis Eïs Fis Gis Aïs His  
փօ-կիսվեր, է-կիսվեր, վէ-կիսվեր, բէ-կիսվեր, խօ-կիսվեր, նէ-կիսվեր, պօ-կիսվեր

Կայ նաև կրկնակի դիեզ #, որ գրւում է կրճատ՝ X և գրուելով նօտայի առջև, նրան կրկնակի կէս-տոն (ասել է ամբողջ տոն) բարձրացնում է:

Բեմօլը գրւում է նշանովս ♭, որ գրուելով օրիէ նօտայի սկիզբը, նրան կէս-տոն ցածրացնում է:

do-bémol si-bémol la-bémol sol-bémol fa-bémol mi-bémol re-bémol  
Ges Be (Hes) As Ges Fes Es Des  
փօ-կիսվար պօ-կիսվար նէ-կիսվ. խօ-կիսվ. բէ-կիսվ. վէ-կիսվ. է-կիսվար

Կայ նաև կրկնակի բեմօլ ♭, որ գրուելով նօտայի առջև, նրան կրկնակի կէս-տոն (ասել է ամբողջ տոն) ցածրացնում է:

Բեկառը գրւում է նշանով #, որ գրուելով նօտայի սկիզբը, ոչնչացնում, բացասում է ինչպէս # ի նոյնպէս և ♭-ի զօրութիւնը և նօտային տալիս է իւր բնական, իսկական տոնը:

դօ, ռէ-բեմօլ դօ ռէ դօ մի-բեմօլ դօ մի դօ ֆա-դիեզ դօ ֆա սօլ սօլ-դիեզ

Կրկնակի դիեզից կամ կրկնակի բեմօլից յետոյ գրուած բեկառը ոչնչացնում է միայն մէկի զօրութիւնը:

Եթէ օրիէ երգի սկզբին, ընտալի-ից յետոյ, գրուած լինի # և կամ ♭ նշանները — այդ նշանակում է, որ բոլոր նօտաները, — որոնք գտնուում են նոյն ձայնախազի վրայ կամ միջանցքում, — իրենց բնական տոնը կէս-ձայն փոխում են՝ մինչև. երգի վերջը: Այդպէս պէտք է հասկանալ նաև նոյն նօտաների օկտաւաները:

Օրինակ.  
ֆա-դիեզ ֆա-դիեզ ֆա-դիեզ  
մի-բեմօլ մի-բեմօլ և այլն

Բանալի-ի մօտ գրուած դիեզներից ու բեմօլներից դատ, եթէ երգի մէջ պատահեն նոյնպիսի նշաններ, նրանք արդէն պատահական են. այդպիսիների զօրութիւնը մի տակտից դէնը չի անցնում:



Բեկառի բացասական զորութիւնն էլ նմանապէս միայն մի տակտին է պատկանում, ուր նա գրուած է, դէնը չի անցնում:



ԳԱՄՄԱ ԿԱՄ ԵԼԵԻԷՋ

Գամմա խօսքը յունարէն է, որ նշանակում է սանդուխ:

Մուզիքայի մէջ կարգով ընթացող ութն նոտաների շարքը կոչւում է զամմա կամ բութ հայկականի՝ կոչւում է ելեէջ:

Ինչպէս յայտնի է, հիմնական նոտաները եօթն են, որոնք իրենց հերթին կազմում են առաջին և օրինակելի զամման վերջանալով առաջին նոտայի կրկնութիւնով:



Բնական օրէնքները ցոյց են տուել, որ այդ ութն նոտաների մէջ կան վեց ամբողջ ձայն: Որովհետեւ ութն նոտաների մէջ եօթն ինտերվալ (ձայնամէջ) կայ, այդ պատճառով վեց ամբողջ ձայն ից մէկը կիսուում է և ստացւում է 5 ամբողջ ձայն և 2 կէս ձայն:


Երկու կիսաձայների դասաւորութեան համեմատ էլ ելեէջները լինում են՝ մաժօն (ուրախ) և մինօն (ախուր):

Մաժօն զամմայի մէջ ամբողջ և կէս ձայնները դասաւորուած են հետեւալ կարգով՝ ձայն, ձայն, կիսաձայն, ձայն, ձայն, ձայն, կիսաձայն:




Այսինքն կիսաձայնները գտնուում են 3-րդից 4-րդ (mi—fa) և 7-րդից 8-րդ (si—do) աստիճանների մէջ:

Մաժօն ելեէջի մասին աւելի որոշ զգալի կարեւր է կազմել զաշ նակի ստեղծներնրի (КЛАВИИЩЬ) վրայ: Այնտեղ պարզ երևում է, որ իւրաբանչիւր ամբողջ ձայնի մէջ, կայ երկու կիսաձայն՝ մեկ սև կլաւիշով: Սև ստեղծներնր չկան միայն mi-ից fa և si-ից do, որովհետեւ դրանց ինտերվալները բնական կէս տոն է արդէն:




Մինօն ելեէջը կազմում է մաժօնից: Մաժօնի առաջին աստիճանից տեղոյիս ցածից սկսուած ելեէջը մինօն է գաւնում: Դօ-ից տեղոյիս ցած գտնուում է լեա: Լեա-ից սկսած ելեէջի մէջ, կիսաձայններն իրենց տեղը փոխում են և ընկնում են 2-րդ նոտայից 3-րդ և 5-րդից 6-րդ:



Այս մինօնը կոչւում է ընական մինօն-ելեէջ:


Որովհետեւ 7-րդից 8-րդը (սօլ—լեա) ամբողջ տոնով անցնելն այնքան էլ ախորժելի չէ լսողութեան համար, այդ պատճառով 7-րդ նոտան (սօլ) արուեստական կերպով կէս տոն բարձրացնում են, որով ինտերվալների մէջ հետեւեալ փոփոխութիւնն է ընկնում:




Մինօնի այս կազմութիւնը կոչւում է հարմոնիքական մինօն:

Հարմոնիքական մինօնի մէջ բացի ամբողջ և կէս տոններից, պատահում է նաև մէկուկէս տոն ինտերվալ, (վերոյիշեալ օրինակում ֆա—սօլ՝ #), որը նորուանների համար բաւական դժուար է երգելը:\*)

Այդ անյարմարութեան առաջն էլ առնելու համար կէս-տոն բարձրացնում են նաև ելեէջի 6-րդ աստիճանը, որով ինտերվալների մէջ նոր փոփոխութիւն է ընկնում:



\*) Մաժօնի մէջ էլ կայ հարմոնիքական մաժօն, ուր պատահում է 1 1/2 տոն ինտերվալ:




Ելեէջի հարմոնիքական մաժօն է, օրինակ, մի աստիճանի արարողութիւնը՝ մինչև «սուրբ սուրբ»:





Այս տեսակ ելևէջը կոչուում է մեյոզիքական մինսոն գամմա:

Նկատելու է ոսկային, որ մեյոզիքական մինսոնը ցածրից բարձր երգելիս պատահում են երկու կիսվեր (վերջոյրեալում Ֆա # և սոլ #), բայց ցածրանալիս՝ այդ պատահական նշանները ոչնչանում են և մինսոն գամման ընդունում է իւր ընական ձևը:



Բոլոր ասածներից երևում է, որ մինսոնը երեք տեսակ կազմութիւն ունի: Անտիոտոնա ա) բնական մինսոն 1, 1/2, 1, 1, 1/2, 1, 1, 1, 1  
Փոփոխական բ) Տարմոնիրական մինսոն 1, 1/2, 1, 1, 1/2, 1 1/2, 1/2  
Գ) մեյոզիքական մինսոն 1, 1/2, 1, 1, 1, 1, 1/2

Մինսոնի բոլոր տեսակների մէջ մի նմանութիւն կայ միայն, որ 2-րդ աստիճանից 3-րդը կէս տոն է, որով և նա զանազանում է մաժորից:

Թէ մաժոր և թէ մինսոն գամմաները երգուում են երկու տեսակ՝ ցածրից բարձր, որ կոչուում է վերընթաց գամմա (восходящая гамма) և բարձրից ցածր, որ կոչուում է վայրընթաց գամմա (нисходящая гамма), իսկ հայերէն երկուսը միասին կոչուում է ելևէջ, այսինքն՝ ելնել և իջնել:

ՏԵՄՊՈ ԿԱՄ ԱՄԱՆԱԿ

Մի որևէ երկ նօտաներով երգելիս պէտք է աչքի առաջ ունենալ նաև նրա ժամանակի չափը:

Երգի այդ չափը կամ երգեցողութեան արագութիւնը կոչուում է տեմպո (tempo), որ տեսականապէս ցոյց է տրուում ձեռի կամ բանոնի շարժումով:

Երգեցողութեան մօտաւոր արագութիւնը ցոյց տալու համար մուգիբայի մէջ գործ են ածուում բաղմամբիւ բառեր, որոնք գրուում են երգի սկզբին, ճակատին, այսպէս.

- 1) Ծանր երգելու համար՝
  - Largo (Larghetto) . . . . . Յոյժ ծանր
  - Adagio (Grave) . . . . . Ծանրագոյն
  - Lento . . . . . Ծանր, հանդարտ
  - Andante . . . . . Ծանր-չափաւոր
- 2) Չափաւոր երգելու համար՝
  - Andantino . . . . . Յոյժ-չափաւոր
  - Moderato . . . . . Չափաւոր

Allegro non troppo . . . . . Ոչ այնքան յորդոր

Allegretto . . . . . Միջակ

3) Արագ երգելու համար՝

Allegro . . . . . Յորդոր

Allegro assai . . . . . Յորդորագոյն

Vivo (vivace) . . . . . Աշխոյժ, ժիր

Presto . . . . . Զտապ, շուտ:

4) Երգի արագութիւնը (տեմպօն) փոխելու համար.

Rubato . . . . . Չափը խիստ չափահանել

Ad libitum . . . . . Երգել՝ չափը ըստ կամաց

Tempo di marcia . . . . . Քայլերգի (մարշի) չափով երգել


Ritardando (կրճատ rit.) . . . . . Արագութիւնն հետզհետէ (poco à poco) դանդաղեցնել

Accelerando . . . . . Արագութիւնն հետզհետէ աւելացնել

A tempo . . . . . Իսկական (սկզբնական) չափով երգել

Volti subito (V. S.) . . . . . Վերագոռնալ շտապով:

Բայց աւելի ճիշտ տեմպօն որոշելու համար՝ գործ է ածուում Մեյլցելի հնարած չափացոյցը (մետրոնոմ), որ մի գործիք է, ունի ճօճանակ:



Ճօճանակի ճօճման արագութեամբ չափուում է տեմպօն:



Ճօճանակի վրայ կայ շարժական ծանրոց, որը ըստ ցանկութեան ինչ թուանշանի մօտ քաշինք, նրա համեմատ էլ կըճօճուի: Չատ երգերի կամ պիեսների գլխին գրուած է լինում *մետրոնոմի* թուանշանը: Օրինակ  $\text{♩} = 72$ , այդ նշանակում է, որ քառորդ նօտան ( $\text{♩}$ ) պէտք է երգել այն արագութեամբ, ինչ որ խփում է ճօճանակը 72-րդ թուանշանի մօտ քաշած ծանրոցով: Կամ թէ՛  $\text{♩} = 100$ , այս դէպքում պէտք է երգել կէս-նօտան այն արագութեամբ, ինչպէս որ ճօճանակը կըխփի թուանշան 100-ի մօտ քաշած ծանրոցով և այլն:

ՆՕՏԱՆՆԵՐԻ ԳԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Առհասարակ երգեցողութիւնը բազմ գուրս գալու և ունկընդիւրների վրայ աւելի զօրեղ տպաւորութիւն թողնելու համար՝ մարդիկ աշխատում են զգացմունքով երգել, ձայնը, — ինչպէս ասում են, — կըլիւրացնել, մըզմըզացնել, զօրեղացնել, մեղմացնել, արագացնել, ծանրացնել, կրկնել, և այլն և այլն: Մուգիրայի կամ ձայնազրուծեան մէջ եւ նօտաներին այգպիսի գեղեցկութիւն տալու համար՝ կան բազմաթիւ նշաններ:

I Կապեր

Ձայնազրուծեան մէջ ամենայնաճախ գործածական նշանն է կապը, որը զբւռում է նօտաների գլխին կամ տակը՝ աղեղնաձև — — —:

1) Եթէ երկու համանուն նօտաներն է իրար հետ կապում, կոչւում է *սինկոպա* (sincopa), որի ժամանակ երկրորդ նօտան առանձին չպէտք է շեշտել, այլ նրա տեղութիւնը պէտք է աւելացնել առաջինի վրայ:

2) Եթէ նոյն կապը զանազան աստիճանի նօտաների վրայ գրուած լինի, կոչւում է *լեգատո* (legato), որի միջոցին նօտաները պէտք է իրար հետ կապելով սահուն երգել՝ առանց շունչ առնելու:

3) Եթէ կապը գրուած լինի միայն երկու նօտաների մէջ, որոնց ինտերվալը մեծ է, այն ժամանակ լեգատօն գառնում է *գլիսսանդօ* (glissando), որ երգելիս պէտք է երկու նօտաների միջի տարածութիւնը խրոմատորաբար սահուն լցնել: Գլիսսանդօն աւելի ջուլթակի վրայ պարզ լուծւում է, երբ նուագածուն մի նօտայից մատով սահելով անցնում է միւսին:

4) Երբեմն  $\frac{4}{4}$ ,  $\frac{3}{4}$ ,  $\frac{2}{4}$  նոյնպէս և  $\frac{3}{8}$ ,  $\frac{6}{8}$  չափ ունեցող տակտերի մէջ պատահում են 3-ական, 5-ական, 6-ական, 7-ական և այլն նօտաների խմբակցութիւններ՝ իբրև տակտի մի մասը: Գրանց գլխին գրուած է կապ նշանը որոնց տեղութիւնը հաւասար է տակտի մէջ պարունակուած 2 կամ 4 նօտաների տեղութեան: Այգպիսի խմբակցութիւնները՝ իրենց մէջ պարունակած նօտաների բանակութեան համեմատ կոչւում են *տրիօյլ*, *կվինտոյլ*, *սեկստոյլ*, *սեպտիմոյլ* և այլն:

Օրինակ.

Մէկ նօտա		Այդ բոլորը		Մէկ նօտա
Երկու նօտա		պէտք է երգել		2որս ,,
Տրիօյլ՝		կէս նօտայի		Կվինտոյլ
Սեկստոյլ՝		տեղութեան չափով:		Սեկստոյլ

Գան նաև ուրիշ անհաւասար խմբակցութիւններ, որոնք առանձին անուն չեն կրում, այլ նրանց գլխին գրուած է կապ և նօտաների բանակի համաձայն թուանշան  $\frac{8}{8}$ ,  $\frac{9}{8}$ ,  $\frac{11}{8}$  և այլն:

5) Կապ նշանը զբւռում է երբեմն մի կամ մի քանի տակտերի (պարբերութեան) գլխին, որի տակ գրուած է բառս՝ *bis* (բիս), և ցոյց է տալիս, թէ այդ պարբերութիւնը պէտք է կրկնել:

Բացի գրանից երաժշտութեան մէջ ընդունուած են նաև ուրիշ գործածական կրկնութեան նշաններ, ուղղահայեաց զոյգ գծերով ու կէտերով և վերադարձ նշանովս —  $\text{♩}$ . Dal segno:



Առաջին դէպքում ուղղահայեաց գծերի կէտերը որ կողմը գրուեն, երգի այն կողմի մասը պէտք է կրկնել: Եթէ գծերի երկու կողմն էլ կէտեր լինեն, պէտք է երգի երկու մասն էլ կրկնել: Երկրորդ դէպքում պէտք է կըրկնել գրուած նշանից (D. S.). կամ եթէ գրուած լինի՝ Da capo sin al segno, պէտք է կրկնել ծայրից մինչև նշանն ♯:

Երրորդ երգի կրկնութեան երկրորդ վերջաւորութիւնը նման չէ առաջինին — այդ վերջաւորութիւնները ջոկ ջոկ կապերի տակ է անուում և գրուումէ՝ **I volta** (առաջին վերջաւորութիւն) **II volta** (2-րդ վերջաւորութիւն), կամ գրուում է աւելի կարճ.



6) Գլխասանդոյի և լեզադոյի հակառակ՝ հրը նոտաների գլխին գրուած է լինում կէտեր, և կապ (detaché) պէտք է նոտաների տեղութիւնից 1/4 բ կրճատելով երգել: Երբ առանց կապի՝ միայն կէտեր լինեն գրուած կամ գրուած լինի բառս staccato (ստակկատո), նոյն նոտաները պէտք է կտրտելով երգել, լուծեամբ անցնելով նրանց տեղութիւնից կէտը:



Կայ նաև staccatissimo, որ նոտաների գլխին գրուում է շեշտեր՝ և երգում է աւելի կարճ կրճատելով տեղութեան 3/4-ը, և այլն.

7) Մի որիէ նոտանի գլխին երբ գրուած է լինում կապ և միջում կէտ (աչրաձև) կոչուում է *Fermato* (fermato), որ ցոյց է տալիս. թէ այդ նոտան պէտք է իւր տեղութեան շափից աւելի երգել, ըստ կամաց:



### II Ընդհարումներ և խաղեր

Գեղեցկութեան նշանների թուին են պատկանում այն *փորրիկ* նոտաները, որ գրուում են գլխաւոր նոտաների առաջ և յետոյ, որոնք նայե-րէնում կոչուում են *ընդհարումներ*: Գրանք են.


1) *Փորշխազ* (vor sehlag—նախ քան շեշտը), գրուում է գլխաւոր նոտայի առջև՝ նրանից ամբողջ կամ կէս-տոն *ըարձր* և կամ անպատճառ կէս-տոն *ցածր*: Փորշխազի վրայից՝ աջից դէպի ձախ թեր գիծ է քաշուում , որը ցոյց է տալիս ընդհարման կարճութիւնը: Փորշխազը խլում է *նախորդ* նոտայի տեղութիւնից չնչին մաս:



Եթէ փորշխազից թեր գիծ քաշուած չլինի , այնքան շուտ չպէտք է անցնել: Այս դէպքում նա խլում է իւր *նախորդ* նոտայից՝ նրա տեղութեան կէտը և իւր վրայ է ընդունում տակտի շեշտը:



2) *Կրկնակի փորշխազը* որ երկու փորրիկ նոտաներից է կազմուած *զանազանակերպ* է լինում:



Փորշխազը լինում է նաև երեք փորրիկ նոտաներով:



3) Գրուպպետտո (gruppetto), նման է ֆորչիստոյին և կազմուած է երկր փորրիկ նօտաներից, որ գրուած է զլխաւոր նօտայի առջև: Երկր նօտաներից միջինն անպատճառ զլխաւոր նօտայի կրկնութիւնն է լինելու, ապա թէ ոչ՝ երկր նօտայով ֆորչիստոյ կրգառնայ:


Գրուպպետտոն հեշտութեան համար կարճ են գրուած նշանովս  $\approx$  եթէ զլխաւոր նօտայի վերեւից է սկսուած, և  $\sim$  եթէ զլխաւոր նօտայի ցածրից է սկսուած:



Երբ գրուպպետտոյի վրայ խրոմատիքական նշան գրուի՝  $\flat$   $\sharp$ , նշանակուած է վերեւի նօտան ևս անպատճառ կիսաձայն է լինելու: Ստորներ միշտ կիսաձայն է արդէն: Եթէ զլխաւոր նօտայի մօտ կէտ լինի գրած, գրուպպետտոն կէտից առաջ է սկսուած, իսկ կէտի տեղ՝ նրա տեղութեան շափով՝ զլխաւոր նօտան կրկնուած է գրուպպետտոյից յետոյ ևս:



Գրուպպետտոյից յետոյ զլխաւոր նօտայի կրկնութիւնը նրա համար է, որովհետև—



4) Տրէլլ (trillo) կամ խաղ, որ գրուած է tr. գրուելով որևէ նօտայի զլխին, ցոյց է տալիս, որ ձայնը պէտք է գոգոզապնել, խաղապնել կրկնելով զլխաւոր նօտայի տեղութեան համաձայն նրա վերին նօտան հերթով ու շտապով:



5) Մորդան (Mordant) սա ևս խաղ է, բայց աւելի կարճ: Երբ գրուած լինի նշանս  $\sim$ , ձայնը մի անգամ է խաղացուած (կրկնուած), իսկ երբ գրուած լինի  $\sim\sim$ , ձայնը երկու անգամ պէտք է խաղացնել:



Երբոր մորդանը մէջ տեղից գծով կտրուած լինի, այդ ժամանակ ձայնի խաղը զլխաւոր նօտայի հետ՝ նրա ցածրինը կըլինի:



Գնդեցկութեան յիշեալ նշանները բաւական կարճացուած են նօտաների գրութեան ձևը: Նոյն կրճատելու նպատակով 8-րդ 16-րդ, 32-րդ և այլն նօտաները երբ կրկնուելու լինեն, գրանց փոխարէն մէկն է գրուած՝ ընդունելով իւր վրայ տեղութեան շափը:





Շատ անգամ մի շարք նոտաների գլխին գրուած է լինում con 8  
—այդ նշանակում է, որ գրուածը պէտք է մի օկտաւ բարձր հասկանանք. դա նրա  
համար է, որ աւելորդ օժանդակ գծերից ազատուենք, իսկ եթէ գրուած լինի loco  
—նշանակում է այնուհետև նոտաները պէտք է հասկանալ իսկական գրուածքով:

III Երգեցողութեան այլևայլ նրբութիւններ

Երգեցողութեան գեղեցկութեան համար գործ են ածուած նաև զանա-  
զան իտալերէն բառեր ու նշաններ, որոնք ցոյց են տալիս երգելու նրբու-  
թիւնները: Այդ բառերը կրճատ ձևով գրուած են նօտայի, տակափ, պարբե-  
րութեան գլխին: Օրինակ.

Piano (կրճատ՝ p.) — մեղմ, կամաց երգել:

Pianissimo (կրճատ՝ pp.) — մեղմագոյն, հազիւ լսելի:

Piu forte կամ pf } ըիչ ուժեղ երգել:

Mezzo forte կամ mf. }

Forte կամ f, ուժեղ, բարձր, զօրեղ:

Fortissimo կամ ff. խիստ ուժեղ, զօրեղ ձայնով:

Sforzando կամ sf. (>) — յանկարծ ձայնը ուժեղացնել:

Fortepiano fp. յանկարծ ձայնը մեղմացնել:

Crescendo (կրճատ cresc. կամ << գորացուցիչ): Մեղմից հետզհետէ զերեղ:

Decrescendo կամ Diminuendo (decrec. կամ dim.) >> մեղմացուցիչ:

Smorzando (Smor.) հետզհետէ ձայնը հանգցնել:

Energico (en.) ոգևորութեամբ, եռանդով:

Dolce (do) քաղցր, բնորոշ, զիւրեկան:

Animato կենդանի, աշխոյժ:

Scherzando ծաղրական, ծիծաղաշարժ:

Espressivo զգացուած, սրտով:

Majestoso վեհ, հանգստութեամբ:

Unisono ունիսոն, միաձայն երգեցողութիւն:

Solo սօլօ, մենբերդ, մենակ երգել:

Tutti բոլորը միասին, ամեններեան:

Coro խմբական երգեցողութիւն, խումբը:

Divisi բաժանուած երկուսի (երկու ձայնի):

Duet երկձայն:

Trio եռաձայն:

Quartet բառաձայն:

Cadence վերջաւորութիւն (նախադասութեան):


Finale վերջին վերջաւորութիւն:

Բացի վերոգրեալներից, մուզիքական բազմաթիւ տերմինների մասին բա-  
ցատրութիւն կարելի է գտնել «Музыкальный словарь»-ում:

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Մ Ա Ս

ԵԼԵԻԷՋՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ


Բացի մաժօն և մինօն ելեէջներից մուզիքայի մէջ գործ է ածուած նաև  
խրոմատիքական ելեէջը, որոնց ինտերվալները բոլորը կիսաձայն են:  
Մուզիքայի մէջ խրոմատիքական գամման բարձրանալիս # (զիեղ) են  
գործ ածուած, իսկ ցածրանալիս՝ b (բեմօյլ):



Այս գամմայից ստորը երևում է, որ բոլոր ինտերվալները միմիայն կի-  
սաձայներից են կազմուած: Դօ-ից մինչև երկրորդ դօ իրենց մէջ պարունա-  
կում են 12 կիսաձայն: \*)

Ուրեմն ինտերվալներին նայելով գամմաները երկու տեսակ են. խրոմա-  
տիքական (կիսաձայնական) և դիատոնիքական (diatonica), վերջինիս ինտեր-  
վալները կազմուած են թէ կիսաձայներից և թէ ամբողջ ձայներից: Դիա-  
տոնիքական գամմաները լինում են՝ ինչպէս գիտենք՝ մաժօն և մինօն: Մու-  
զիքայի մէջ ընդունուած է կրճատ գրել՝ մաժօն մեծատառ Մ. (M.), իսկ մինօն՝  
փոքրատառ — մ. (m.):

Եթէ ուշի ուշով քննենք հիմնական մաժօն ելեէջի կազմութիւնը, կը-  
տեսնենք որ, նա բազկացած է՝ երկու միակերպ մասերից, որոնք կոչոււմ են  
տետրախորտ (tetrachord) — բառաւար:




\*) Տես գաշնամուրի եօրե սպիտակ և հիւնգ սև կլաւիշները շարքով (երես 17):




Թէ առաջին և թէ երկրորդ տետրախորտի ինտերվալներն են — տոն, տոն և կէս-տոն:

Ստորին տետրախորտի հիմքն է I-ին աստիճանը (դօ), վերին տետրախորտի հիմքը՝ V-րդ աստիճանը (սօլ):







Վերին տետրախորտն ընդունելով ստորին, կազմում ենք մի ուրիշ ելևէջ, թողնելով ինտերվալների դասաւորութիւնը հիմնական մաժօռ ելևէջի շարքին համաձայն:



Երկրորդ տետրախորտի մէջ գործածեցինք մէկ դիեզ (Ֆա #), որպէս զի ինտերվալներն համաձայն լինեն մաժօռ ելևէջի ինտերվալներին (7-րդից 8-ը կիսաձայն): Այս դամման, որովհետև սկսում է սօլ՝ նօտայից, այդ պատճառով կոչուում է սօլ-մաժօռ գամմա: Սօլ՝ մաժօռից եթէ նոյն ձևով նոր գամմա կազմելու լինենք, կստանանք ուէ մաժօռ, որը ունի արդէն երկու դիեզ՝ Ֆա# և դօ#:





Այս ձևով եթէ միշտ շարունակելու լինենք վերին տետրախորտից (կամ V-րդ աստիճանից) նորանոր ելևէջներ կազմել, կստանանք մի-մի # աւելի: Բայց այդ դիեզները գրում են ելևէջի սկիզբը, բանալիից յետոյ: Նոյն ելևէջները տեղից ցածրից սկսելով դառնում են մինօռ: Վերջիններս ունեն նաև պատահական նշաններ: Մեր օրինակներում նախապատուութիւն է տրուած հարժոնիքական մինօռին:



Կարելի է շարունակել և գրել նաև դօ# մաժօռ և լեա# մինօռ, որոնց մէջ բոլոր ձայնանիշները իրենց իսկական տոնից կէս-կէս տոն բարձրանում են: Ասել է կունկնան եօթը կեսվեր: Բայց դօ# մաժօռը նոյնն է (նոյն ձայնանիշներն ունի՝ թէև տարբեր անուն տակ), ինչ որ ուէ մաժօռը, որը ունի 5 կիսվար միայն, այս պատճառով էլ դօ# մաժօռի փոխարէն՝ յաճախ գործ է ածուում ուէ մաժօռը:

Իսկ բեմօյլներով գամմաներ կըստացուի այն ժամանակ, երբ մենք ցածրի V-րդ աստիճանից սկսենք կազմել նորանոր ելևէջներ: Օրինակ դօ-ից 5 աստիճան ցած կըլինի Ֆա (կամ 4 աստիճան բարձր):





Որպէս զի մաժօռի կազմութիւնը ուղիղ դուրս գայ, սի նօտան կէս տան ցածրացնում ենք և ստանում ենք սի ♭: Եթէ այս ձևով (ստորին կվինտայից) նորանոր ելեկշներ կազմելու լինենք, կստանանք մէկ-մէկ բեմօլ՝ աւելի: Բեմօլներն էլ զբուսում են ձայնատողի սկիզբը՝ բանալիից յետոյ:

Փա Մաժօն (F dur)      Ռէ մինօն (D moll)

Սի<sup>♭</sup> Մ. (Re dur)      Սօլ՝ մ. (G moll)

Մի<sup>♭</sup> Մ. (Es dur)      Դօ մ. (C moll)

Հեա<sup>♭</sup> Մ. (As dur)      Փա մ. (F moll)

Ռէ<sup>♭</sup> Մ. (Des dur)      Սի մ. (Be moll)

Կարելի է նոյն կերպ շարունակել և գրել նաև սօլ<sup>♭</sup> մաժօն, դօ<sup>♭</sup> մաժօն և համապատասխան մինօռները. բայց առաջինը նոյնը կլինի, ինչոր Փա # մաժօնն է, իսկ երկրորդը նոյնն է, ինչոր սի մաժօնը:

Ահա այսպէս խրոմատիքական գամմայի իւրաքանչիւր նօտայից կազմեցինք առանձին, առանձին գամմաներ, որից դուրս եկաւ 12 մաժօն գամմա և 12 նրանց համապատասխան մինօռ գամմա: Ուրեմն, մուզիքայի մէջ կայ 24 զխրոմոնիքական և մէկ խրոմատիքական գամմա, թէպէտ և վերջինս ինչ նօտայից ուզենանք, կարող ենք սկսել:

ՄԵԼՕԴԻԱՅԻ ԿԱՄ ՄԵՂԵԴԻԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Որևէ ելեկշի նօտաները զանազան աստիճանի ու չափի տակ դնելով՝ առաջ է գալիս մի եզանակ, մի մելօդիա. Որոշելու համար, թէ այդ մելօ-

դիան մաժօն է թէ մինօն և թէ ինչ գամմայով է զբուսած այն, պէտք է ուշադրութիւն դարձնենք նախ բանալիի մօտ զբուսած խրոմատիքական նշանների (# կամ ♭) թուին: Սակայն որովհետև միևնոյն թուով # կամ ♭ ունեն երկու ելեկշներ՝ մաժօն և մինօն, այդ պատճառով պէտք է նաև ուշադրութեան առնել՝ մելօդիայի սկսուող ու վերջաւորուող նօտաները, որոնք ընդհանրապէս առաջին աստիճանին (tonica) են պատկանում: Բայց այս դէպրումն էլ բացառութիւններ լինում են, ուստի վերջապէս՝ հարկաւոր է դիտել այլևս այն հանգամանքը, որ մինօն ելեկշներն ունին պատահական նշաններ, որ գտնուում են եօթերորդ և երբեմն էլ նաև վեցերորդ աստիճաններում, թէպէտ և այս էլ ոչ ամեն անգամ: Վարժ աչքը և լսելիքը իսկոյն կարող է իմանալ եզանակի՝ մաժօն կամ մինօն լինելը:

ՄԻՆԻՆՈՅՆ ԵՂԱՆԱԿԸ ԶԱՆԱԶԱՆ ԵԼԵԿՇՆԵՐՈՎ

Որովհետև եւրոպական նօտաներից ամեն մէկն ունի իւր յատուկ տոնը (ձայնը), որը չի կարելի ըստ կամաց բարձր կամ ցածր վերցնել, — ինչպէս այդ պատահում է հայկական ձայնադրութեան կամ թուանշանական սիստեմի մէջ, — ուստի միևնոյն մելօդիան՝ առանց եզանակը փոխելու, կարող ենք նաև ուրիշ ելեկշներով գրել՝ երգիչների ձայնի կամ նուազարանի յարմարութեան համաձայն: Այսպէս օրինակ, հայոց պատարագի արարողութեան «Փառքեղ Տէր»-ը կարող ենք գրել մաժօնի 12 ելեկշներին էլ, որոնց զանազանութիւնը ոչ թէ եզանակի, այլ ձայնաստիճանների բարձրութեան կամ ցածրութեան մէջ կըլինի: Նախապատուութիւն տալ իս են այն ելեկշին, որով մելօդիան կարելի լինի այնպէս երգել (նուագել), որ երգողների կարողութիւնից բարձր կամ ցածր չըլինի:

Դօ մաժօն (do M.)

Սօլ՝ մաժօն (sol M.)

Փա մաժօն (fa M.)



Այս երեք ելևէջներով գրուած կայ «Փառք քեզ Տէր»-ը Մ. Եկմարեանի կազմած պատարագի արարողութեան մէջ: Պարելի է նոյնը և միւս ելևէջներով գրել: Վերոյգրեալ եղանակը կարող ենք նաև քսասի բանալիով գրել, ցածրա ցնելով մէկ կամ երկու օկտաւ (ուժնեակ):

Ահաւասիկ.

Օկտաւ ցած



Երկու օկտաւ ցած




Երկու օկտաւ ցած



Պարելի է ջութակի (սօլ') բանալիով գրուածըը բասի (ֆա) բանալիով գրել նոյն ձայնախազերի վրայ. սակայն պէտք է խմանալ, որ այս դէպքում մեթոդիան նոյնը պահելով՝ ելևէջը (օրեմն և նօտաների անունները) նոյնը չի մնալ:

Օրինակ.

Հեա մինօն (la m.)



Դօ մինօն (do m.)



Որևէ գրուածք իւր իսկական տոնով երգելու համար, եթէ երաժշտական գործիքներ (նուագարաններ) չկան, անհրաժեշտ է ունենալ ձայնացոյց (camerton—կամերտոն), որը սրղպատէ երկճիւղ մի գործիք է և տալիս է



լեա-ի տոնը՝ եթէ վրան գրուած լինի Ա, իսկ եթէ գրուած լինի Օ—տալիս է դօ-ի տոնը, որից յետոյ կարելի է գտնել միւս նօտաները: Այսպէս օրինակ, լեա-ից մի աստիճան ցած է սօլ', որից հետո կարելի է գտնել դօ-ն և կամ այն ձայնաստիճանը, որով սկսուած է երգը:

Ընդհանրապէս պէտք է երգից առաջ գտնել նրա ելևէջը և՛ լսողութիւնը լարելու համար՝ մի բանի անգամ երգել այն, ապա թէ անցնել երգը սովորելուն:

Դօ գամմայի մէջ կամերտոնի ձայնը՝ լեա-ն գտնուած է VI-րդ աստիճանում:

Ռէ	”	”	”	”	”	V-րդ	”
Մի	”	”	”	”	”	IV-րդ	”
Փա	”	”	”	”	”	III-րդ	”
Սօլ'	”	”	”	”	”	II-րդ	”
Հեա	”	”	”	”	”	I-րդ	”
Սի	”	”	”	”	”	VII-րդ	”

Բայց անվարժ լսողութիւն ունեցողների համար աւելի յարմար է ունենալ խրոմատիքական կամերտոն, որը իւր վրայ ունեցած թիթեղի օգնութեամբ տալիս է ուղածղ նօտայի ձայնը:

ԳԱՄՄԱՆԵՐԻ ԱԶԳԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Գիտաոնիրական ելևէջներն իրար հետ համեմատելուց յետոյ, կրտեսներ որ նրանցից մի բանիսը միմեանց շատ նման են, այսինքն՝ գրեթէ նոյն նօտաներն ունին, իսկ միւսները՝ քիչ նման են և կամ բոլորովին նման չեն միմեանց: Օրինակ դօ մաժօն ելևէջը եթէ համեմատենք լեա մինօնի հետ, կրգտնենք այնտեղ ևս նոյն նօտաները. եթէ համեմատենք ֆա մաժօնի հետ, գարձեալ խիստ նմանութիւն կրգտնենք:

Դօ մաժօն

Փա մաժօն

Այստեղ միմիայն սի և սի՛ նօտաներն իրար նման չեն, բոլոր մնացածներն իրար նման են: Այսպէս կարող ենք բոլոր ելևէջներն իրար հետ համեմատել: Մի ուրիշ օրինակ, ուր միայն մէկ նօտան է նման, իսկ մնացածները նման չեն. օրինակ ֆա մաժօն և սի մաժօն:

Փա մաժօն

Սի մաժօն

Այստեղ միմիայն նման են մի-երը:



Ահա երևեցներ յայսպիսի նմանութիւնը կոչում է ազգակցութիւն: Երկու երևեց որքան շատ նօտաներով իրար նման լինեն, այնքան մօտ ազգակցից կըլինեն և, ընդհակառակը, որքան ընդհանուր նօտաներ թիչ ունենան, այնքան հեռու ազգակցից են: Իսկ երբ նման նօտաներ չունենան,—ազգակցից էլ չեն կարող լինել:

Օրինակ դօ-մաժօն-ի ամենամօտ ազգակցներն են, լեա-մինօն, սօլ-մաժօն, մի-մինօն, ֆա-մաժօն և ռէ-մինօն, եւ այլն:

Երգչի եղանակների մէջ երբեմն փոխանցումն է լինում մի երևեցից դէպի միւրը՝ առհասարակ դէպի ամենամօտ ազգակցից երևեցը, որով և առաջ է գալիս եղանակի չեղումն՝ զարտուղութիւն, զարձուածք:

Օրինակ.



Այս օրինակում Փա մաժօն երևեցից անցնում է լեա մինօնի. Այդ չեղումն սկսում է 4-րդ տակտի կէսից:

— —

ԻՆՏԵՐՎԱԼՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ


Ինչպէս յայտնի է, ինտերվալները (ձայնամէջ) լինում են՝ պրիմա (կամ ունիսոն) սեկունդա, տերցիա, կվարտա, կվինտա, սեկստա, սեպտիմա, օկտաւա, նօնա, դեցիմա, անդեցիմա և այլն: Բոլոր այդ ինտերվալները երկու տեսակ են՝ մեծ և փոքր:

Վերջները դօ մաժօնի երևեցը՝ իբրև օրինակելի երևեց և ինչ ասուի սրա համար, նոյնը պէտք է կրկրել նաև միւս երևեցների համար:

Պրիման (դօ—դօ, ռէ—ռէ և այլն) նոյն նօտայի կրկնութիւնն է և ձայնաստիճան չունի:


Քններ միւսները.

Սեկունդաներ.




Դրանից երևում է, որ սեկունդայի ինտերվալը լինում է՝ երբեմն ամբողջ տոն, երբեմն կէս տոն: Առաջին տեսակին ասում են՝ մեծ սեկունդա, իսկ երկրորդ տեսակին՝ փոքր-սեկունդա:

Տերցիաներ.



Դրանից էլ երևում է, որ տերցիաներն ունենում են՝ կամ երկու ամբողջ-տոն և կամ մէկուկէս տոն: Երկու տոն ունեցողին ասում են՝ մեծ տերցիա, տոնուկէս ունեցողին՝ փոքր տերցիա:

Կվարտաներ.



Կվարտան միշտ երկուտուկէս տոն է ունենում և կոչւում է զուտ կվարտա. բացառութիւն է կազմում չորրորդ աստիճանից կազմած կվարտան (ֆա—սի), որ երեք ամբողջ տոն ունի և կոչւում է մեծագոյն կվարտա (увеличенная кварта):

Կվինտաներ.




Կվինտան էլ միշտ երեքուկէս տոն ինտերվալ ունի և կոչւում է նոյնպէս զուտ-կվինտա, բացառութիւն կազմում է եօթերորդ աստիճանից կազմուած կվինտան (սի—ֆա), որ ունի միայն երեք-տոն և կոչւում է փոքրագոյն կվինտա (уменьшенная квинта):

Սեկստաներ.



Սեկստան երկու տեսակ է: Չորսուկէս տոն ունեցողը կոչւում է՝ մեծ սեկստա, չորս տոն ունեցողը՝ փոքր սեկստա:

Սեպտիմաներ.



Սեպտիման նոյնպէս երկու տեսակ է. մեծ սեպտիմա, որ ունի 5 1/2 տոն, և փոքր սեպտիմա, որ ունի 5 տոն:

Օկտաւան, ինչպէս և պրիման մի տեսակ են միայն լինում.




Յկտաւան ունի վեց սմբողջ տոն ինտերվալ, իսկ պրիման՝ չունի



Խրոմատիքական նշանների օգնութեամբ՝ կարելի է մեծ ինտերվալը փոքր (փոքրագոյն) դարձնել և ընդհակառակը՝ փոքր ինտերվալը մեծ (մեծագոյն) շինել:

Օրինակ.

Մեծ տեղեկա, փոքր տեղեկա, փոքր տեղեկա, մեծ տեղեկա, փոքր տեղեկա, մեծ տեղեկա:



ԱԿՎՈՐԴՆԵՐ

Մի բանի ձայների միաժամանակեայ ներդաշնակ հնչիւնը կոչուում է ակորդ:

Ակկորդները լինում են՝ ախորժելի (consonance) և անախորժ (dissonance):

Ակկորդները կազմուում են տերցիաներից՝ իբրև բաղբրահնչիւն ինտերվալներ:

Օրինակ.




Այս հաշուով հիմնական նոտան ակկորդի մնացած նոտաների հետ կազմում է տերցիա, կվինտա, սեպտիմա, նոնա և այլն:

Ակկորդները լինում են. եռահնչիւն (трехзвучие), քառահնչիւն, — սեպտիմա խօսքից՝ սեպտակկորդ և հնգահնչիւն՝ նոնակկորդ:



Եռահնչիւն են այն ակկորդները, որոնք երեք ձայնի լծակցութիւնից են առաջ գալիս. այսինքն՝ հիմնական ձայնից, տերցիայից և կվինտայից:

Եռահնչիւնները՝ ինտերվալներին նայած՝ լինում են չորս տեսակ.



I-ին եռահնչիւնը բաղկացած է նախ՝ մեծ տերցիայից և ապա փոքր տերցիայից (դօ + մի, մի + սօլ) և կոչուում է մեծ եռահնչիւն և կազմում է ուրախ, զուարթ ակկորդ (մաժօն):

II-րդ եռահնչիւնը բաղկացած է՝ նախ փոքր և ապա մեծ տերցիաներից (դօ + մի, մի + սօլ) կոչուում է փոքր եռահնչիւն. կազմում է տխուր, մելամաղձոտ ակկորդ (մինօն):


Այս երկու ակկորդն էլ ախորժելի են և գործածական:

III-րդ եռահնչիւնը բաղկացած է երկու փոքր տերցիաներից (դօ + մի, մի + սօլ) և կոչուում է հոբրագոյն եռահնչիւն:

IV-րդ եռահնչիւնը կազմուում է երկու մեծ տերցիաներից (դօ + մի և մի + սօլ) և կոչուում է մեծագոյն եռահնչիւն:

III-րդ և IV-րդ՝ այսինքն փոքրագոյն և մեծագոյն՝ եռահնչիւններն անախորժ են և գրեթէ չեն գործածուում:


Եռահնչիւններն աւելի ախորժելի դարձնելու համար յրացնում են, կրկնելով հիմնական նոտան ութնեակ բարձր:



Գամմայի իւրաքանչիւր աստիճանից կարելի է եռահնչիւն կազմել՝ լծէ մաժօնի և լծէ մինօնի: Սակայն այդպէս իրար լետից գրել և երգել (նուագել) չի կարելի, անախորժ զուրս կըդաշ:

Բոլոր ակկորդների կանոնաւոր և համապատասխան դասաւորութեան մասին եղած գիտութիւնը, որ աւելի բարդ է, կոչուում է հարմոնիա, ներդաշնակութիւն:

Իւրաքանչիւր եռահնչիւն ունի երեք ձև. մէկ հիմնական և երկու տեղափոխուած:



Տեղափոխութիւնը ստորին նոտայից է իմացուում: Տեղափոխուածներից ք-ն կոչուում է սեկստակկորդ և նշանակուում է թուանշան 6-ով (սեկստա), իսկ ք-ն կոչուում է կվարտ-սեկստակկորդ և նշանակուում է մուլթիբայի մէջ %-ով (կվարտա և սեկստա):



ՄԱԺՕՈՒԻ ԵՒ ՄԻՆՕՈՒԻ ԵՌԱՀԵՉԻՆՆԵՐԸ

ԴՕ Մ. I II III IV V VI VII

ԼԿԱՄ. I II III IV V VI VII

Միայն հարմոնիքական մինուսի III-րդ աստիճանից կազմուած եռահնչիւնը՝ իբրև մեծագոյն (ուրիմն և անախորժ)՝ չի գործածուում:

Մնացած բոլոր եռահնչիւններն էլ գործ են անում, յաճախ կամ նուազ շախտով: Գրանք բաժանուում են երկու խմբակցութեան՝ յաճախ գործածականները կոչուում են գրիաւոր եռահնչիւններ՝ իսկ նուազ գործածականները՝ երկրորդական եռահնչիւններ:

Գլխաւոր եռահնչիւնները, որ ամենախորժելիներն են, գտնուում են թէ՛ Մ-ի և թէ՛ մ-ի մէջ՝ I-ին, IV-րդ և V-րդ աստիճաններում. դրանք կրում են հետեւեալ անունները՝ հիմնական կամ տոնիրական (tonica), ստորին սիրապետող կամ սուբ-դոմինանտ (sub-dominante) և սիրապետող կամ դոմինանտ (dominante) եռահնչիւնները:

Մաժօուի (M.) գլխաւոր եռահնչիւնները բոլորն էլ մեծ եռահնչիւններ են, իսկ մինուսիներ (մ.) — երկուսը փոքր եռահնչիւն է, իսկ մէկը՝ մեծ:

Տերցիական կանոնով կազմուում են նաև բառահնչիւնները (և հնգահնչիւնները — նօնակկորդ), որոնք կոչուում են սեպտ-ակկորդ (սեպտիմա — 7) դրանք անախորժ ակկորդներ են, այս պատճառով էլ գործածուելու դէպքերում, իրենցից յետոյ պահանջում են անպատճառ ախորժելի ակկորդ: Քառահնչիւնների մէջ յաճախ գործածականը թէ՛ մաժօուի և թէ՛ մինուսի V-րդ աստիճանի վրայ եղածն է, որ կոչուում է դոմինանտ սեպտակկորդ և որը, իրենից յետոյ պահանջում է տոնիրական I-ին աստիճանի եռահնչիւն:

ՆՕՏԱՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Ելեկշի ամեն մի նօտան՝ ակկորդներ կազմելիս՝ ունի իւր կատարելիք գերը և նշանակութիւնը: Այդ նօտաներն իրենց նշանակութեան համեմատ էլ զանազան անուններ են կրում. այսպէս՝

Առաջին և ութերորդ նօտաներն իրար նման են և կոչուում են ելեկշի հիմնական տոնը՝ տոնիքա, որից մէկը ստորին տոնիքա, միւսը՝ վերին:

Երկրորդ և չորրորդ նօտաները (մեր օրինակում ուե և սի) այնպիսի մի յատկութիւն ունեն, որ ձգտում են դէպի տոնիքան. Ա-րդը ձգտում է ստորին տոնիքային, իսկ Վ-րդը՝ վերին: Գրա համար էլ կոչուում են ձգտող, տարող տոն (ВВОДНЫЙ ТОНЪ), որովհետեւ երգելիս նրանց վրայ կանգ առնել, հանգստանալ չի լինիլ, մեր լսողութիւնը չի ընդունում:

Չորրորդ և հինգերորդ նօտաները (Փա և աջ) կոչուում են՝ սիրապետող կամ դոմինանտ, որովհետեւ երգերի մէջ այս նօտաներն ամենից շատ են կրկնուում, որով և եղանակի վրայ իշխում են, տիրում են: Չորրորդ նօտան հինգերորդից մի աստիճանով ցած լինելուն համար կոչուում է ստոր-սիրապետող կամ ստոր-դոմինանտ (կամ թէ՛ չորրորդ նօտան վերին տոնիքայից հաշուած հինգ աստիճան ցած է, դրա համար էլ ասում է ցածի, ստորին տիրապետող):

Երրորդ և վեցերորդ աստիճանի նօտաները (մի և լեա) կոչուում են միջին տոններ, որոնք մաժօու և մինուս ակկորդներ կազմելիս ունեն իրենց նշանակութիւնը. երրորդ նօտան տոնիրական եռահնչիւնի միջին տոնն է՝ իսկ վեցերորդ աստիճանի նօտան՝ սուբ-դոմինանտ եռահնչիւնի միջինը:

Գրանք մինուս կզանակում վուփոխութեան են ենթարկուում և ակկորդներին տալիս են տխուր յատկութիւն:

ԵՐԳԵՅՈՂՈՒԹԻՒՆ

Նօտաներով երգելու համար՝ պէտք է ունենալ մարուր ձայն և նուրբ լսողութիւն: Կան ձայնաւոր երգիչներ, որոնք չեն կարող իրենց ձայնին լաւ



տիրապետել: Երգելիս նրանք երգի տոնը փոխում են՝ կամ ցածրացնում են կամ ընդհակառակը՝ բարձրացնում են: Այդպիսիները եթէ ուզում են ուղղուել, երկար վարժութիւններ պէտք է կատարեն գամմաներով՝ ա և օ տառերով: Առհասարակ որոնց ձայնը երգելիս ցածրանում է, նրանք պէտք է վարժուեն մատոն գամմաներով և դիէզ-ներով երգելու մէջ, իսկ որոնց ձայնը երգելիս ընդհակառակը՝ բարձրանում է, նրանք էլ պէտք է վարժուեն միևնօր-գամմաներով և բեւօջ-ներով երգելու մէջ:

Երգելու ժամանակ պէտք է կանգնել ուղիղ, գլուխը բարձր պահել, իսկ կուրծքը քիչ դուրս գցել, բերանը լիքը և կլոր բաց անել, այնպէս որ բերանի մէջ գատարկ տարածութիւն չառ լինի, լիզուն տափակ՝ ծայրով թեթեւ շօշափելով ցածրի ատամները: Կէմքի դժագրութիւնը հանգիստ, առանց կնճիւղներ արձակելու և առանց կարմրելու, սրպէս զի ձայնը դուրս գայ բնական, ուղիղ և փափուկ:

Չունչ պէտք է բաշել խօսքերի սկզբին՝ չուտ և խոր կրծքով, իսկ երգելիս, չունչը բաց թողնել խնայողաբար:

Խմբական երգեցողութեան ժամանակ բոլոր երգիչները միանգամից չպէտք է շունչ քաշեն, այլ հերթով: Դադարող երգիչը նորից խմբի հետ երգելիս՝ կամաց ձայնով պէտք է սկսէ, որ այդ բանը ունկնդիրների համար աննկատելի լինի: \*)

Յայտնի է, որ մարդկանց ձայնը միատեսակ չեն. նրանք զանազանում են իրենց առանձնայատկութեամբ (timbre) և ձայնի ծաւալով (diapason):

Ձայնի տեւքը ամեն մի մարդու և ամեն մի նուագարանի համար առանձին յատկութիւն ունի, որով նրանք զանազանում են մէկը միւսից՝ չնայելով որ նոյն նօտան կամ միևնոյն եղանակը երգեն, իսկ ծաւալի վերաբերեալ՝ ձայները լինում են:

1) Իզական ձայներ՝ սօպրանօ (զիսկանտ), մեցցօ-սօպրանօ, այլտօ և կոնտր-այլտօ:

2) Արական ձայներ. տենօր, բարիտոն, բասս և կոնտր-բասս կամ բասսօ-պրօֆոնդօ:

Մանկութիւնից արբունքի հասած ժամանակ (14—17 տարեկան) մարդկանց ձայները փոխում են. տղաներինը դառնում է արական թաւ ձայն, իսկ աղջիկների սուր ձայնը աւելի ընդարձակութիւն և ուժ է ստանում: Հիւանդութիւնների ժամանակ նոյնպէս ձայնը փոփոխութեան է ենթարկում: Այդպիսի դէպքերում բոլորովին պէտք է երգելը դադարեցնել:

Ձայների ծաւալը

I ԻԳԱԿԱՆ.

Սօպրանօ — առաջին դօ-ից հասնում է մինչև 2-րդ լէա (երբեմն մինչ 3-րդ դօ)	մինչև 2-րդ լէա
Մեցցօ-սօպրանօ — դօ-ից	մինչև 2-րդ լէա:
Այլտօ — ցածրի սի <sup>7</sup> -ից	մինչև 2-րդ ռէ:
Կոնտր-այլտօ՝ ցածրի սօլ-ից	մինչև 1-ին սի <sup>7</sup> :

II ԱՐԱԿԱՆ.

Տենօր — փոքր օկտաւի դօ-ից հասնում է մինչև 1-ին օկտաւի լէա (երբեմն աւելի)	մինչև 1-ին օկտաւի լէա
Բասսօնոն ,, ,, դօ-ից	մինչև ,, լէա:
Բասս — մեծ օկտաւի լէա-ից	մինչև ,, ռէ:
Կոնտր-բասս մեծ օկտաւի դօ-ից	մինչև փոքր ,, սի <sup>7</sup> :

Երգեցողութիւնը լինում է միաձայն, երկձայն, եռաձայն և քառաձայն (երբեմն և բազմաձայն):

Քառաձայն երգեցողութիւնը ամենից լրիւն է, զօրեղն է, զեղեցիկն է. կատարեալն է: Միաձայն երգողները մինչև չվարժուին, այսինքն մինչև խօղութիւնները չվարժեցնեն երկձայն երգեցողութեան, նրանք չեն կարող քառաձայն խմբերի մէջ մտնել, այլապէս թէ իրենք կըշփոթուեն և թէ ուրիշներին կըխանարեն:

Բացի տեմբոից ու ծաւալից, ձայներն ըստ զօրեղութեան բաժանում են նաև ռեգիստրների, որ լինում են՝ կրծքային ձայն, զլխի ձայն և երկուսի միջինը ֆայլցետային ձայն:

Գրծքային ռեգիստրը ամենից զօրեղն է ու խանդոտը, որ ցածրի նօտաներն է վերցնում: Փայլցետայինը աւելի խուլ է ու մեղմ. այդ միջին նօտաներով արտայայտում է բնորոշ զգացմունքներ ու հոգեկան տանջանքներ: Գլխի ձայնը, որ բարձր նօտաներն է վերցնում, աւելի թեթեւ է ու աւելի խորաթափանցը, որ մարդկանց վերացնում է զէպի իզլակական աշխարհը...

Երգեցողութեան այդ բոլոր դէպքերումն էլ պէտք է խոյս տալ կոկորդային ու ռեգային ձայնի հանելուց, որ ասիացիներին համար սովորական է:



\*) Երգեցողութեան վերաբերեալ կանոնների աւելի մանրամասն բացատրութիւնը տես «Ուղեցոյց տարրական ձայնագրութեան» գրքոյի մէջ:



Ն Գ Ա Տ Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Գրաւոր վարժուքիւններէ հաւնար պիտի կ հոսաւորապէս աշուպիս առաջնորդուել:

1 Տեսերէրի վրայ քաշել սալ հիւնգախան զուգանկուական զծեր. հաշուել զծերը ցածրից դիպի բարձր եւ դնել բուսակըսներ, հաշուել նաեւ միջանցները եւ դնել բուսակըսներ:

2 Գրել կոչոր եւ սեւ կիտերով հոսաներ, նոյն հոսաները գրել կարգով՝ նախ զծերի վրայ, յետոյ զծերի միջանցնում եւ ապա բոլորը միասին: Օժանդակ զծեր քաշել, գրել այնքան հոսաներ:

3. Առնել հոսայի տեսակներ եւ գրել բանալիները, գլխաւորապէս սոլ<sup>1)</sup> բանալին միւնչել վարժուելը: Դնել ընթացի բանալին ձայնախազերի սկիզբը եւ գրել հոսաները կարգով՝ դօ, ու, մի, ֆա եւ այլն: Ինքանալ իւրաքանչիւր հոսայի տեղը հիմնաւոր կերպով:

4. Կոսաների ձեւերը գրել. աւրոյդ հոսա, կիս հոսա, քառորդ հոսա եւ այլն. նախ մաքուր բոլորի կամ գրաստիտակի վրայ եւ ապա ձայնախազերի վրայ:<sup>2)</sup>

5. Գաւազաների ձեւերը գրել բաժանելով այն՝ հաւասարաչափ մասերի: Հաւեւանել հոսաների նկ: Գիտեր դնել հոսաների եւ պարզաների մօտ:

6. Բաժանել ձայնախազերը հաւասարաչափ մասերի, սակերի եւ գրել կոսորակներ  $\frac{2}{4}$ ,  $\frac{3}{4}$ ,  $\frac{4}{4}$ ,  $\frac{6}{8}$  եւ այլն:<sup>2)</sup>

7. Գրել ցածրի դօ-ից բոլոր իններվայները վերընթաց ուղղութեամբ եւ վերին (երկրորդ) դօ-ից հակառակ—վայրընթաց ուղղութեամբ:

8. Վարժուել գրելու խրոնոսիտական նշանները: Դնել այն՝ ձայնախազերի վրայ եւ նրանց միջանցնում:

9. Թելադրութիւն անել, այսինքն խորութեամբ ձայնագրել սալ քերել վարժուքիւններ՝ գաւազաների մասերով եւ զանազան իններվայներով:

10. Գրել դօ մաժօն գաւազան եւ աղիղներով ցոյց սալ աւրոյդ եւ կէս տոն-երի տեղերը: Նոյնը անել լիա միւնչօն գաւազանի վերաբերեալ:

11. Գրել սալ իտալերէն ստներ եւ այդ ստներով գրել՝ լաոգօ, մոգեռասօ, ալլեգրօ, պիանօ, Փօրտէ, կրեչչենդօ, դիմինուէնդօ եւ այլն:

Եյս ձեւով պիտի կ գրութեան վարժեցնել նաեւ գրոյնի երկրորդ մասը: Օրինակ, գրել սալ բոլոր տեսակ գաւազաները, որոշել նրանց մաժօն եւ միւնչօն շիւնելը: Մի բանալիով գրուածիք փոխել ուրիշ բանալիով, եւ այլն եւ այլն:

Գրաւոր եւ բանաւոր (եզգելու) վարժուքիւնները պիտի կ դասերի հետ զուգընթաց լինեն:

<sup>1)</sup> Սօլ, դեմօլ, — պէտք է փափուկ արտասանել:

<sup>2)</sup> Մի երես քառակուսի թուղթ վերցնել ե հաւասարաչափ ծալծելով՝ ցոյց տալ ամբողջի մասերը:

# ԵՐԳԵԼՈՒ ՎԱՐՇՈՒԹԻՒՆՆԵՐ

I Գաւազաներով \*)

The musical notation consists of 12 staves, each beginning with a treble clef and a common time signature (C). The music is written in a simple, rhythmic style, featuring various note values and rests. The first staff shows a sequence of quarter notes. The second staff introduces eighth notes. The third staff continues with quarter notes. The fourth staff features a more complex rhythmic pattern with eighth notes. The fifth staff has a similar pattern to the fourth. The sixth staff shows a sequence of quarter notes. The seventh staff has a similar pattern to the sixth. The eighth staff features a sequence of quarter notes. The ninth staff has a similar pattern to the eighth. The tenth staff shows a sequence of quarter notes. The eleventh staff has a similar pattern to the tenth. The twelfth staff features a sequence of quarter notes.

\*) Երգել՝ չափաւոր տեմպով ե միայն նօտաների անուններով:



Նոյն ելևէջները երգել աստիճան աս աստիճան՝ ղօ, ղէ, ղօ՝ ղօ, ղէ, մի,  
 ղէ, ղօ և այլն, կամ վերին օկտավայից՝ ղօ, սի, ղօ՝ ղօ, սի, լեա, սի, ղօ և այլն:

II հնետրվայներով \*)

№ 1.

№ 2.

№ 3.

\*) նրգիկ նախ նօտաներով և ապա ձայնաւոր գրերով՝ ա, օ, ի, է, ու:

№ 4.

№ 5.

№ 6.



№ 7.

№ 8.

№ 9.

№ 10.

III Կիսաձայնեռով \*)

№ 1.

№ 2.

IV երկու ձայնով \*\*)

№ 1.

\*) Երգել ձայնաւոր գրերով և լա, լա, լո, լո կամ լէ-լէ վանկերով:

\*\*) Նախ առանձին և ապա միասին երգել ձայնաւոր գրերով, վանկերով (լա, լէ, լո) և կամ յարմարեցրած բառերով:



№ 2.

№ 3.

№ 4.

№ 5.

Մսժոն

Միսոն



Մ Երկնայն երգերով

Andante

№ 1. *ի - զուր ևն ի - զուր բըռ-նա - ւոր*

*ըս - պառ - նա - լիք ըս ա - մե - նայն.*
*ի - զուր ևն ի - զուր բըռ - նա - ւոր*
*ըս - պառ - նա - լիք ըս ա - մե - նայն:*

Allegro

Ոչ ըս շըղ-թայք չեն զօ - ըս - ւոր ընկ - ճեկ զո - զիս մեր

*հայ - կա - կան, ոչ ըս շըղ - թայք չեն զօ - ըս - ւոր*
*rit. ընկ - ճեկ զո - զիս մեր հայ - կա - կան:*

Tempo di marcia

№ 2. *1 նա դա - ւա - ճան է, ով ան - տար - բեր է*  
*2 Հե - ըիք է հե - ըիք, հայ հըս - կա - նե - ըի*

*մայր Հայ - աս - տա - նի կո - ծը տես - նե - լիս.*  
*սուրբ շե - ըիմ - նե - ըին նա - խա - տինք թա - փեն,*



մատ - նիչ է և դա - ւա - ճան,  
ա - նէծք և բիւր նա - խա - տինք

մայր Հայ - աս - տա - նի լա - ցը տես - նե - լիս:  
նո - ցա ա - նու - նին և յի - շա - տա - կին:

Moderato

№ 3.

1 Ախ - պէ - ըրս ծա - ուի տա - կին  
2 Սաղ - մոսն ան - գիր է ա - ըի

Չան գիւ - լիմ Չան Չան, սաղ - մո - սը կը -  
,, ,, ,, ,, ,, լե - զուն ըրլ - բուլ

ոսն տա - կին Չան ծա - դիկ Չան Չան:  
է դա - ուի ,, ,, ,, ,, ,,

Allegro non troppo

եղանակեց Սահակ Բահ. Սահակեանց\*)

№ 4.

Ա - շու - նը ե - կաւ, թա - փե - ցաւ սա - դարթ,  
Բնու - թիւ - նը տը - խուր, պար - տէ զը տըր - տում,

էլ մի փընտ - ըիլ գու մա - նու - շակ ու վարդ -  
ձը մեռ - ւայ հոգան է մար - դո - ցը սըր - տում:

է - ըե - խան փակ - ւած մե - նակ սե - նեա - կում,  
Միտ - քը բե - բում է գար - նան օ - ըե - ըը,

\*) նոյն երգը կարելի է սկսել յետ մածոսից, այսինքն ուղղակի կամերտոնի ձայնից: Լեա Մ-ի գուգահեռական միտոն է՝ ֆա # միկուր:

պա - տու - հա - նի - ցը պար - տէղ է նա - յում -  
մար - գի - ըի վը - ըայ զը - ւարթ խա - դե - ըը:

Մի տըրտումիլ, տը - դայ, թող անց - նի մար - տը,  
Նո - ըից սո - խա - կը պի - տի զայ հան - դէս,

նո - ըից կը բաց - լին նար - գիզն ու վար - դը,  
նո - ըից խա - դա - լու գու կեր - թաս պար - տէղ:

Lento

№ 5

1 Որս - կան ախ - պէր, սա - ըն կու - գաս,  
2 Դար - դի ձեռ - քից, սա - ըրն ըն - կաւ,

սա - ըր մա - ըալ կը փընտ - ըես,  
իմ մա - ըա - ըը, իմ բա - լէս,

Ա - սն, եա - ըալ, գու չը տե - սմը  
Գը - լուխն ա - ու, բա - ըրն ըն - կաւ,

espres

իմ մա - ըա - լիս, իմ բա - լէս:  
իմ ջի - ւա - նըս, իմ բա - լէս:





Moderato

Եղանակեց Սահակ Բահ. Սահակեան


№ 6.



1	Դեռ թո - թո - վա - խօս	մի մա - նուկ է -
2	Դըպ - ըո - ցի շէմ - քին	դեռ ոտք չը - դը -
3	Բայց կարճ մը - նա - ցի	ու - սում - նա - ըա -



ի,	եօ - թը տա - ըե -	կան
բած,	դեռ նոր է - ի	ես
նում,	աղ - քա - տի	բախ - տը



ան - զամ չը - կա - յի,	երբ ինձ ա - լան - դեց
զիր - քը ձեռքս ա - ոած,	երբ մօ - ըըս համ - բոյր
դէ ինչ է լի - նում...	հօ - ըըս պատ - էէ - ըով



հայ - ըըս իմ ան - ուս՝	մի սըր - բա - զան խօսք
թըր - ջեց իմ ճա - կատ	ու պատ - ի - ըեց ինձ՝
սով - ըե - ցի ար - հեստ,	սի - ըե - ցի նը - ըա

rit.

A tempo



և այդ էր՝ նա - մուս՝	4. Եւ այն օ - ըից
ա - նեղ միշտ ղէյ - ըաթ՝	Քըր - տին - ըը դէմ -
վաս - աա - կը հա - մեստ:	



յե՛տ, երբ ըն - կե - ըա - ցայ	մուրճ ու սա - լի
քէս ծո - ըում է կաթ կաթ	ու ինձ յի - շեց -



հետ	մուրճ ու սա - լի	հետ:
նում	նա - մուս ու ղէյ - ըաթ:	





198  
20

16

### ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

- 1. Ս. ՊԱՅԱՐԱԳԻ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ  
Յարմարեցրած նորումների համար.  
ԳԻՆԸ 15 ԿԷ . . . . . 20 կոպ.
  - 2. ՈՒՂԵՑՈՑՑ ՏԱՐՐԱԿԱՆ ՉԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ  
Յարմարեցրած ուսուցիչների համար.  
ԳԻՆԸ . . . . . 40 կոպ.
  - 3. ՉԵՐՆԱՐԿ ԵՐՐՈՊԱԿԱՆ ՉԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ.  
Յարմարեցրած ուսումնարանների համար.  
ԳԻՆԸ . . . . . 50 կոպ.
- 10-ով առնողը ճանապարհածախս չի վճարել:  
50-ով առնողին 20% գեղջ է լինում:

Դիմել. Армавиръ, Къб. Об.  
 Регенту С. Шаапяну.  
 Ծախուում են նոյնպէս՝ Թիֆլիսի «Գուտտենբերգ» և  
 «Գենտրոնական» գրավաճառանոցներում:

2